ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ՆԵՈԹՈՄԻԶՄԻ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԺԹ-Ի դարերում կաթոլիկ փիլիսոփաները մեծ ուշադրություն են դարձրել բնազանցության եւ գոյաբանության մշակմանը: Տիեզերաբանությունը (կոսմոլոգիա), ըստ նեոթոմիստների, յուրահատուկ ուղեցույց է. իրերի աշխարհի դիտարկումով հայտնաբերում ենք կեցության եւ գոյավորիրնույթը:

Նեոթոմիստական բնազանցության (մետաֆիզիկա) համար ելակետային են կրեացիոնիզմի՝ արարչագործության տեսության սկզբունքները: Բնազանցությունը հենվում է Աստծո եւ աշխարհի սկզբունքային, էական տարբերակման եւ սահմանազատման վրա. «Տիեզերքն արմատապես, գոյաբանորեն տարբեր է Բացարձակից»[1]: Աստծո արարչագործությունը պետք է ըմբռնել ոչ թե որպես ձեւավորում, կազմավորում, այլ՝ «արարում (ստեղծում) ոչնչից»[2]: Դեռեւս ԺԴ դարում Թովմա Աքվինացին իր աշխատություններում նշում է. «Բարձրագույն Չեւը կամ ձեւերի Չեւը «բացարձակ Կեցությունն է»՝ նախանյութի եւկեցության ողջ բազմազանության Արարիչը»[3]:

Ըստ նեոթոմիստների՝ բնազանցական քննարկումները վերջ ի վերջո հանգում են սկզբնապես որեւէ բնութագիր եւ որոշակի «ձեւ» չունեցող ներունակ (պոտենցիալ) նախահիմքի գաղափարին: Այդ ներունակ նախահիմքը «նախանյութն» է (prima materia)[4]: «Նախանյութը» Աստծո արարած կրավորական նախահիմքն է, որից եւ ատվածային ստեղծագործ զորությամբ արարվել է նյութական կեցության ողջ բազմազանությունը[5]: Նեոթոմիստական բնազանցությունը եւ գոյաբանությունը մերժում են այն տեսակետը, ըստ որի, Աստծունհավիտենակից է նյութը, որից Արարիչը միայն ձեւավորել է գոյություն ունեցող աշխարհը: Նյութը եւս արարված է եւ ժամանակի մեջ սկիզբ ունի: Լեւոն XIII պապի «Aeterni Patris» կոնդակում նշված է. «Բոլոր իրերն արարվել են «ոչնչից»՝ Աստծո ամենակարող զորությամբ. դրանք գոյություն ունեն Աստծո բանականության շնորհիվ եւ շարժման մեջ են դրվում, ուղղորդվում են Նրա կողմից դրանցից յուրաքանչյուրի համար նախասահմանված նպատակին»[6]: Նեոթոմիստ տեսաբանների կարծիքով «լինել» նշանակում է լինել արարված եւ կեցություն ստացած ատվածային Կեցությունից:

Աշխարհի, արարչագործության եւ կյանքի սկզբի մասին քննարկումներում ըդգծվում

1 **Б. Л. Губман**, Современная католическая философия, Москва, 1988, с.16.
2 Անդ:
3 **Ч. Кополстон**, Аквинат, Москва, 1999, с.86.
4 Տե՛ս անդ, էջ 87:
5 Տե՛ս **J. F. Anderson**, An Introduction to the Metaphysics ofSt. Thomas Aquinas, Chicago, 1953, էջ 32:
6 **В. Рожков**, Очерки по истории римско-католической Церкви, Москва, 1994, с.81.

է նաեւ ժամանակի բնույթի խնդիրը. ժամանակը, ինչպես եւ գոյության յուրաքանչյուր ձեւ, արարել է Աստված: Իսկ Արարիչը անփոփոխ եւ հավերժական է՝ ժամանակից դուրս լինելու իմաստով[7]: Նեոթոմիստները նշում են. «Ոչնչից արարված» աշխարհը բացարձակ Մտքի մեծագույն ստեղծագործությունն է, սակայն այդ «ստեղծագործությունը» սահմանափակ է տարածության եւ ժամանակի մեջ[8]: Արարված իրերի աշխարհը մի համակարգ է, որի բաղկացուցիչները կազմում են միասնական «կարգավորվածություն»[9]:

Ըստ նեոթոմիստ տեսաբանների գիտական նորագույն փաստարկները ևս հաստատում են, որ աշխարհը ժամանակի մեջ սկիզբ ունի: Եթե նույնիսկ հնարավոր լիներ ապացուցել, թե աշխարհը ժամանակի մեջ սկիզբ չունի, սա ամենեին չէր նշանակի, թե այն արարված, ստեղծված չէ, քանզի իրերի աշխարհը կարող է միայն գոյություն ունենալ բացարձակ, անհրաժեշտ Կեցության շնորհիվ[10]:Այսպիսով, նեոթոմիստական բնազանցությունն ընդունում է աշխարհի՝ ժամանակի մեջ սկզբնավորության եւ Աստծո կողմից «ոչնչից» արարման սկզբունքը: Այն, որ աշխարհը ստեղծվել է «ոչնչից», չի նշանակում, թե աշխարհը արարվել է «ոչնչից» հետո: Լուվենի համալսարանի նեոթոմիստների ըմբռնմամբ նյութական կեցության ողջ բազմազանությունն ստեղծվել է Աստծո արարած ներունակ նախահիմքից՝ նախանյութից հետո[11]: Այսինքն, աշխարհի ստեղծումը դեռեւս արարչագործության սկիզբը չէ: Նեոթոմիստներն ընդգծում են նաեւ, թե ժամանակն ու տարածությունն արարվել են նախքան նյութը եւ դրանից անկախ[12]:

Աշխարհի արարչագործության մասին իր տեսակետներն է արտահայտել նաեւ հայ աստվածաբան-փիլիսոփաՇահան Պերպերյանը:Որոշ տեսաբաններ պնդել են, թե Էվոլյուցիոն (բարեշրջական) տեսությունը հակադրվում է աստվածաբանությանը: Սակայն Շահան Պերպերյանն իր «Բնազանցություն» աշխատության մեջ հիմնավորում է հակառակ տեսակետը. բարեշրջական (evolutionniste) տեսության միջոցով բացահայտվում է կենսաձեւերի աստիճանական զարգացումը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ արարչագործության պսակը մարդ արարծն է: Շահան Պերպերյանը հաշտեցնում է հավատքն ու գիտությունը եւ ընդգծում, որ դրանք լրացնում են միմյանց. օրինակ՝ բարեշրջական տեսությունը հիմնավորում է արարչագործության աստվածաշնչյան ավանդությունը[13]: Ըստ Շահան Պերպերյանի կրեացիոնիզմը (արարչագործության տեսություն) մշտապես ունեցել է հեղինակավոր պաշտպաններ եւ արտահայտել է կյանքի առաջացման մասին քրիստոնեական դիրքորոշումը, սակայն նկատի ունենալով գիտական նորագույն նվաճումներն ու առաջընթացը՝ այն պետք է այլ շեշտադրում ունենա եւ առավել խորությամբ մեկնաբանվի:

Նեոթոմիստական բնազանցության հիմնահարցը կեցության ճանաչումն է: Այն խիստ որոշակիորեն տարբերում է «կեցությունը» (esse) եւ «գոյավորը» (ens), գոյություն ունեցողը, այսինքն՝ այն ինչ օժտված է կեցությամբ, ինչին հատուկ է կեցությունը, ինչ «կա»: Այս

7 Տես **Ч. Кополстон**, Аквинат, էջ 88-89:
8 Տես **Р. Радев**, Критика неотомозма, Москва, 1975, էջ 290:
9 Տես **J. Owens**, An Elementary Christian Metaphysics, Milwaukee, 1963, էջ 142:
10 Տես **Э. Жильсон**, Томизм, Москва-Санкт-Петербург, 2000, էջ 54-55:
11 Տես **Р. Радев**, Критика неотомизма, էջ 294:
12 Տես անդ, էջ 293:
13 Տես **Շահան Պէրպէրեան**, Բնազանցութիւն, Պէյրութ, 1978, էջ 68:

տարբերակումն էական նշանակություն ունի նեոթոմիստական մետաֆիզիկան ըմբռնելու համար: Բացարձակ, անսկիզբ կեցությունն Աստված է, որից եւ կեցություն են ստանում բոլոր արարված, վերջավոր իրերը[14]: Օնթոլոգիան (էաբանությունը) բացարձակ Կեցության ճանաչողությանը հասնում է իրերի աշխարհի միջոցով: Այսպես՝ Կեցությունը բոլոր իրերի եւ երեւույթների, այդ թվում նաեւ շարժման սկզբնապատճառն է, եւ Նրաճանաչողությանը հասնում ենք իր իսկ գործողությունների եւ դրսեւորումների միջոցով: Միակ իրականությունը «ինքնին Կեցությունն (esse)»է. Նառչմիայն աշխարհի գոյության, այլ նաեւ դրա միասնության հիմքն է, որովհետեւ աշխարհի միասնությունը որոնվում է աստվածային Կեցության մեջ: Գոյավոր իրերի նմանությունն այն է, որ դրանք «կան», գոյություն ունեն, կանխադրված են Կեցության մեջ եւ Նրա շնորհիվ: Սակայն նեոթոմիստները նշում են նաեւ. «Կեցությունը բուն իմաստով եւ ի սկզբանե Ոգի է», հետեւաբար, աշխարհի միասնությունը ոգեկանության մեջ է, ընդ որում, այն հիմնվում է ոչ թե ներգոր (իմանենտ), այլ՝ տրանսցենդենտ (անդրանցական) ոգեկանության վրա, որը կանխադրում է Աստված[15]:

Տարբերը եւ որոշակին, անհամադրելին եւ միանմանը, որոնք վերաբերում են նյութին, չեն կարող լինել աշխարհի միասնության կրողները: Միասնությունը բխում է նույնականից, անդրանցականից, անփոփոխից եւ հավերժականից, որոնք ոգեկան Կեցության հատկություններն են: Այդ միասնությունը նկատելի է նաեւ «գոյավորների» մեջ, սակայն դա հիմնված չէ նյութական նախահիմքի վրա: Աշխարհի միասնության հիմքի՝ աստվածային Կեցության հարաբերությունը նյութական իրերի եւ երեւույթների բազմազանության հետ համանման է պատճառի եւ հետեւանքի հարաբերությանը: Ինքնին աստվածային Կեցությունը համապարփակ է, որն արտահայտում է գոյության բոլոր ձեւերի միասնությունը: Բացարձակ Կեցությունն իրերի աշխարհի գոյության հիմքն է եւ անկախ է նյութական որոշակի դրսեւորումներից[16]: Բացարձակ Կեցությունը հավիտենական **Է**-ն է, աշխարհի Արարիչը, իրերի աշխարհի կեցության միասնության հիմքը, ամենայնի սկզբնապատճառը[17]: Որոշ նեոթոմիստներ (Պ. Լուրց, Կ. Ֆաբրո) նշում են, որ ոգեկան Կեցության, որպես բացարձակ Կատարելության մեջ արդեն «թաքնված» է, պրեֆորմիզմի եզրութաբանությամբ՝ «նախակերպավորված» է աշխարհի ողջ առարկայական բազմազանությունը[18]: Իսկ Շահան Պերպերյանը «ինքնին Կեցությունն» անվանում է նաեւ բարձրագույն **Է**, «անհրաժեշտ **Գոյ**»[19]: Ըստ նրա՝ բարձրագույն Կեցությունը միակ բացարձակ իրականությունն է, որից գոյաբանական կախվածության մեջ է գտնվում իրերի աշխարհը: Բացարձակ Կեցության մեջ չկա «գոյության» եւ «էության» երկատում, այլ Նրա մեջ դրանք ի սկզբանե նույնական են: «Գոյություն ունենալը», «լինելը» բացարձակ Կեցության իսկությունն է: Աստվածային կեցությունը լիովին տարբերվում է իրերի աշխարհի կեցությունից, քանզի բոլոր վերջավոր, արարված իրերը կեցություն են ստացել հենց այս անսկիզբ, անվախճան եւ բացարձակ կատարյալ ոգեկան Կեցությունից: Շահան Պերպերյանը նշում է, որ ոգեկան Կեցությունն անպատճառ սկզբնա-

14 Տես **Б. Л. Губман**, Современная католическая философия, էջ 19:
15 Տես **П. Тиллих**, Систематическое Богословие, Санкт-Петербург, 1998, էջ 58:
16 Տես **Р. Радев**, Критика неотомизма, էջ 298:
17 Տես **А. Ф. Лосев**, Бытие-имя-космос, Москва, 1993, էջ 42:
18 **F. Ferre**, Basic modern philosophy ofReligion, New York, 1967, p. 27.
19 Տես **Շ. Պերպերեան**, Բնազանցութիւն, էջ 86:

պատճառն է, իսկ աշխարհը՝ հետեւանքը. արարչագործությունը վկայում է Արարչի՝ Աստծո մասին: Ըստ նրա բացարձակ Կեցության մասին վկայում են նաեւ ճանաչողության գործընթացի ոչ նյութական բնույթը եւ հոգեկան երեւույթների էությունը[20]:

Այսպիսի տեսակետ արտահայտել է նաեւ նեոթոմիստ Ժակ Մարիտենը: Ըստ նրա՝ «ինքնին Կեցության» էության մասին են վկայում իմացության գործընթացի ոչ նյութական բնույթը եւ հոգեկան, անվախճան «էությունը», որը որպես համապարփակ բնություն, նկատվում է բոլոր զգայական իրերում ու երեւույթներում, այն ընդհանրական է եւ արտահայտում է բացարձակ Կեցության հոգեւոր, որոշարկող բնությունը[21]:

Երբ նեոթոմիստական բնազանցությունը վերլուծում է իրերի աշխարհի կեցությունը, այն օգտագործում է «էություն» (essentia) եւ «գոյություն» (existentia) արիստոտելյան երկատումը (դիխոտոմիան): Այս երկատումն իմաստ ունի, երբ վերաբերում է արարված իրերին, որոնցում տարբերակվում եւ զուգորդվում են «էությունն» ու «գոյությունը»: «Ներունակը» նկարագրվում է որպես մի «էություն», որը դեռեւս օժտված չէ «գոյությամբ»: Կեցությանը վերաբերվել նշանակում է լինել արարված: Իսկ «էությամբ» օժտված լինել, այսինքն՝ լինել այս կամ այն որոշակի իրը, նշանակում է լինել սահմանափակ, վերջավոր, լինել ոչ թե «կեցություն» որպես այդպիսին, այլ «որոշակի կեցություն»[22]: Եթե կեցությունը հաստատում է դրական սկիզբը, ապա էությունը կեցության սահմանափակումն է: Իրերի աշխարհի կեցությունն էապես տարբերվում է ասպվածային Կեցությունից: Վերջինիս մեջ չկա «էության» եւ «գոյության» տարբերակում, քանի որ Նրանում չկա կեցության սահմանափակում: Բացարձակ Կեցության մեջ «էությունն» ու «գոյությունը» միացած չեն իրար, ինչպես վերջավոր իրերում, այլ ի սկզբանե նույնական են: Այսպիսով, նեոթոմիստական բնազանցության եւ գոյաբանության հիմքում ընկած է բացարձակ Կեցության, ինչպես նաեւ գոյություն ունեցող իրերի՝ Նրա արարած, ածանցյալ աշխարհի ըմբռնումը[23]: Ըստ նեոթոմիզմի՝ իրերի աշխարհում կեցությունն իր ներքին բովանդակությունն արտահայտում է «էության» եւ «գոյության» միջոցով: Թեեւ արարված աշխարհում «էությունն» ու «գոյությունը» տարբերվում են, սակայն ճիշտ չէր լինի դրանց զատումը, քանզի այս դեպքում «գոյությունն» առանց «էության» կլիներ անորոշ, իսկ վերջինս առանց «գոյության»՝ անիրական: Նեոթոմիստ տեսաբանները նշում են նաեւ, որ «էությունը» դեռեւս «կեցություն» չէ, եւ փիլիսոփայական մտածողության սխալ է դրանք շփոթելը[24]: «Էությունը» միայն «գոյության» միջոցով կարող է իրական (ակտուալ) դառնալ, եւ կեցությունը սահմանափակվում է «էությամբ»: Թոմա Աքվինացին նշում էր, որ «էությունը» տարբերակում եւ որոշակիացնում է իրը: Նյութական իրերի առնչությամբ «էությունը» կազմված է «ձեւից» եւ «նյութից» (ibid)[25]: Իսկ ԺԹ դարում նշանավոր նեոթոմիստ Ժակ Մարիտենը գրում է, որ նեոթոմիստական բնազանցության նախադրյալներից է «իրական (ակտուալ) էության» դիտարկումը, որն առնչվում է ոչ միայն «ձեւի», այլ նաեւ իրականության եւ գործողության հետ, քանզի վերացական «էությունից»

20 Տես անդ, էջ 77:
21 Տես **Р. Радев**, նշվ. աշխ., էջ 301:
22 Տես **Б. Л. Губман**, Современная католическая философия, էջ 26:
23 Տես **Ю. А. Камелев**, Философия религии, Москва, 1998, էջ 58:
24 Տես **P. Edwards**, The Encyclopedia of Philosophy, New York, 1972, v. 7, էջ 112:
25 Տես **J. Hastings**, Encyclopedia of Religion and Ethics, Edinburgh, 1964, v. 12, էջ 322:

չի կարող բխել իրականություն: Իրերի աշխարհում «գոյությունն» ու «էությունը» լրացնում են միմյանց. «գոյության» միջոցով «էությունը» դրսևորվում է որպես «գոյավոր», այսինքն՝ վերածվում է իրողության: Իսկ Արարչի մեջ «էությունն» իրական եւ բացարձակ է, ի սկզբանե նույնական է «գոյությանը»:

Պլատոնը պնդում էր, որ կեցությունը (ens) հենց «էությունն» է[26], իսկ սուբյեկտիվ իդեալիստները կեցությունը ընկալում էին որպես «գոյություն»: Նեոթոմիստները, հակադրվելով այս երկու տեսակետներին, «էությունը» դիտարկում են որպես գոյություն ունեցող, իսկ «գոյությունը»՝ էությանը մասնակից[27]:

Ռ. Ռադեւը նկատում է, որ ի տարբերություն թոմիզմի, նեոթոմիզմի գոյաբանության մեջ «էության» եւ «գոյության» հիմնահարցի ասպվածաբանական եւ փիլիսոփայական կողմերը հստակ սահմանազատված են[28]: Ըստ նեոթոմիզմի՝ արարված աշխարհում «էությունն» ու «գոյությունը» նույնական չեն եւ լիովին չեն համընկնում, այդ պատճառով այստեղ կեցությունն (ens) անկատար եւ պատահական է: Միայն ասպվածային Կեցությունն է բացարձակ կատարյալ եւ անհրաժեշտ. Նրանում «էությունն» ու «գոյությունը» նույնական են, եւ հենց այս նույնականությունը ենթադրում է ասպվածային Կեցության բացարձակություն եւ կատարելություն[29]:

Աշխարհում «նյութականի» եւ «ոգեղենի» փոխհարաբերության հիմնահարցը նեոթոմիստական գոյաբանության մեջ լուծվում է «հյուլեձեւության» (հիլեմորֆիզմ) սկզբունքով, որը նրանց տիեզերաբանության (կոսմոլոգիա) հիմքն է: Գոյություն ունեցող, արարված իրերի մեջ «էությունն» իր հերթին դիտվում է որպես «նյութի» եւ «ձեւի» երկմիասնություն: «Էության» հարաբերությամբ «նյութն» ու «ձեւը» համարժեք են հնարավորությանը եւ իրականությանը. «նյութ» ասելով ենթադրում ենք ներգոր էությունը, իսկ «ձեւ» ասելով՝ առկա (ակտուալ), իրողություն դարձած էությունը[30]: Թոմա Աքվինացին նշում էր. «Չենք կարող ասել, թե մատերիան (նյութը)գոյությունունի, քանզիգոյություն ունի միայն «սուբստանցը» (վերջավոր իրը), որը «ձեւի» եւ «մատերիայի» միասնությունն է»[31]: Նեոթոմիստական հյուլեձեւությունը ընդգծում է «ձեւի» առաջնությունը «նյութի» նկատմամբ: Նշանավոր նեոթոմիստ Կորեթը գրում է. «Նյութական էակը «գոյություն ունեցողն» է, որի էությունը բաղկացած է «ձեւից» եւ «նյութից», որոնք որպես անորոշ եւ որոշարկող կազմում են ամբողջական էակ: Այսպիսի էություն ունեցող էակը նյութական սուբստանց է»[32]: Նեոթոմիստներն ընդգծում են, որ «ձեւը» նյութեղեն չէ, իսկ «նյութը» երկրորդային է: «Ձեւը» որոշարկող սկզբունքն է. դրա շնորհիվ են վերջավոր իրերը դառնում որոշակի եւ տեսակային բնութագիր ունեցող: Իրերի աշխարհում տեղ գտած «ձեւը» բնութագրվում է որպես ոգեղեն բաղկացուցիչ: Մարդկային գոյության դեպքում «ձեւը» հոգին է, իսկ «նյութը»՝ մարմինը: Մարդու ներքին հոգեկան երեւույթները եւս վերաբերում են «ձեւին»: Յուրաքանչյուր մահկանացու ունի միայն մեկ

26 Տես «Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ», Երեւան, 1979, էջ 76:
27 Տես «История философии», Москва, 1965, т.VI, էջ 195:
28 Տես **Р. Радев**, Критика неотомизма, Москва, 1975, էջ 308:
29 Տես **А. Ф. Лосев**, Бытие-имя-космос, Москва, 1993, էջ 65:
30 Տես **J. Owens**, An Elementary Christian Metaphisics, Milwaukee, 1963, էջ 154:
31 Տես **Ч. Кополстон**, Аквинат, Москва, 1999, էջ87:
32 **Б. Л. Губман**, Современная католическая философия, с.32.

սուբստանցիային «ձեւ»[33]: Իսկ «նյութը» տիեզերաբանության բնագավառում կատարում է բավականին կարեւոր դեր. այն այսպես կոչված անհատականացման (ինդիվիդուալացման) սկզբունքն է: Նեոթոմիստների կարծիքով «հյուլեձեւության» տեսությունը կախված չէ գիտական էմպիրիկ (փորձնական) հետազոտությունների արդյունքներից: Այսպես՝ նյութի ատոմա-էլեկտրոնային կառուցվածքի մասին գիտական փաստարկները չեն պարզաբանում նյութականի եւ ոգեղենի փոխհարաբերության հիմնահարցը: Գիտությունը կարող է տվյալներ մշակել նյութի կառուցվածքի մասին, սակայն չի վերլուծում եւ չմեկնաբանում նյութականի եւ ոգեղենի միջեւ եղած կապը, բացի այդ, գիտական տվյալներն ունեն առավել գործնական նշանակություն: Ըստ նեոթոմիստների՝ հիլեմորֆիզմի (հյուլեձեւության) տեսությունը դիտարկում է ինչպես նյութական իրերի էությունը, նույնպես եւ հոգեկան երեւույթները: Այս տեսանկյունից «նյութը» բնորոշվում է որպես քանակի, իսկ «ձեւը»՝ որակի սկզբունք: Բնագանցությունն ընդգծում է նաեւ «նյութի» եւ «ձեւի» էական միասնությունը:

Նեոթոմիստները հիմնականում առաջնորդվել են Թոմա Աքվինացու փիլիսոփայության սկզբունքային դրույթներով: Նրանք, հետեւելով Թոմա Աքվինացուն, փորձում են հաշտեցնել գիտությունն ու հավատքը եւ գիտական առաջընթացը օգտագործել Աստծո գոյությունը, արարչագործության տեսությունը հիմնավորելու համար: Նշանավոր փիլիսոփա-աստվածաբան Թոմա Աքվինացին, հակադրվելով նախորդ մտածողներին, նկատում է, որ Աստծո գոյության գիտակցությունը՝ էր բնածին է, այլ բանականության լույսը, որիշնորհիվմենք ունակ ենքարարված աշխարհը դիտարկելով բացահայտելու Աստծուն՝ բոլոր գոյավորների Սկզբնապատճառին: Աստվածճանաչողությունը հիմնավորելիս Թոմա Աքվինացին հիմնվում է առաքելական վարդապետության վրա. «...Արդարեւ ի սկզբանէ աշխարհի Աստծու անտեսանելիությունը, այն է՝ Նրա մշտնջենաւորութիւնը եւ զօրութիւնը եւ աստուածութիւնը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մէջ...»[34]: Նշանավոր նեոթոմիստ Էտիեն Ժիլսոնը նկատում է, որ գրեթե բոլոր քրիստոնյա աստվածաբաններն ու փիլիսոփաները, որոնք խոսում էին Աստծո գոյության մասին, մեջբերում էին այս խոսքերը, սակայն միայն Թոմա Աքվինացին է դրանք ողջ իմաստային խորությամբ ըմբռնել[35]: Աստծո գոյությանը կարելի է հասնել անալոգիայի (համաբանություն) միջոցով, այսինքն՝ Արարչին բացահայտում ենքնրա ստեղծագործության միջոցով: Սակայն պետք է նկատի ունենալ, որաստվածիմացությունը համանմանական եւ ոչ թե համարժեք (ադեկվատ) ճանաչողություն է:

Նեոթոմիստական բնագանցության եւ գոյաբանության մեջ կարեւոր տեղ են զբաղեցնում Աստծո գոյությունը հիմնավորող «թոմիստական ապացույցները», որոնք հայտնի են նաեւ «կաթոլիկյան ապացույցներ» անվամբ: Նեոթոմիստները պնդում են, որ Աստծո գոյության ապացույցները աստվածճանաչողությունը խթանող միջոցներ են, քանզի մատնանշում են օբյեկտիվ (առարկայական) եւ փորձնական իրականության այն երեւույթները, օրինաչափություններն ու հատկությունները, որոնք անհրաժեշտաբար ենթադրում են բա-

33 Տես **Р. Радев**, Критика неотомизма, էջ 312-314:
34 Հռոմ. Ա20:
35 Տես **Э. Жильсон**, Томизм, էջ 44-46:

ցարձակ Կեցության գոյությունը[36]: Նեոթոմիստները փորձում են Աստծո գոյությունը հիմնավորել բանականության միջոցով. արարչագործության ճանաչումը պետք է դրամաբանական հիմք լինիԱրարչիգոյությունը բացահայտելու համար: Թոմա Աքվինացին մերժեց Անսելմ Քենթրբերացու «գոյաբանական ապացույցը» եւ առաջադրեց իր տեսակետները: Ըստ Չ. Կոպոլստոնի՝ Թոմա Աքվինացու «ապացույցները» լրացնում եւ ամբողջացնում են իրար, քանզի դիտարկում են իրերի աշխարհը տարբեր տեսանկյուններից: Այս ապացույցները փիլիսոփայական եւ աստվածաբանական գրականության մեջ անվանվում են նաեւ «Աստծո գոյության ավանդական ապացույցներ»[37]: Վերջիններս ժամանակի ընթացքում նեոթոմիստ տեսաբանների կողմից լրացվել են Աստծո գոյությունը հիմնավորող նոր փաստարկներով՝ պատմական, անթրոպոլոգիական (մարդաբանական), հոգեբանական, ընկերաբանական եւ այլն:

Ըստ նեոթոմիստների՝ մարդկությանը մշտապես հուզել է Աստծո գոյության հիմնահարցը: Աստծո գոյությունը կարելի է բացահայտել տիեզերքի, աշխարհի, մեզ հասկանալի եւ ըմբռնելի բնական երեւույթների եւ օրենքների ճանաչողության եւ դիտարկման միջոցով: Օբյեկտիվ իրականության մեջբանականության միջոցով հայտնաբերում ենքայնպիսի իրողություններ, որոնք ստիպում են անդրանցնել փորձնական իրականությունըեւիտորիրդածել աստվածային կեցության մասին: Այն ամենի մասին, ինչ վերաբերում է Աստծո կեցությանը, մենք ի վիճակի ենք դատելու միայն իրերի աշխարհում մեզ ծանոթ կեցության համանմանությամբ: Նեոթոմիստ տեսաբանները, զարգացնելով օնթոլոգիան (էաբանություն)եւ գոյաբանությունը, փորձում է հասնել բացարձակ Կեցության գոյության բացահայտմանը: Նրանք օգտագործում են ժամանակակից գիտական նվաճումները՝ անփոփոխ պահելով բնազանցական սկզբունքային դրույթները: Բնազանցությունը ներկայացնում է բոլոր ժամանակների համար իրական «անանց ճշմարտություններ»եւ այդ պատճառով ինչ-որ իմաստով «հավերժական փիլիսոփայություն» է: Նեոթոմիզմը գիտա-փիլիսոփայական համակարգէ իր տարբեր ենթաբաժիններով՝ տիեզերաբանություն, էաբանություն, բնազանցություն, իմացաբանություն, գոյաբանություն, մարդաբանություն եւ այլն: Այս համակարգը ներառում է բոլոր ժամանակների նշանավոր փիլիսոփաների եւ աստվածաբանների արժեքավոր տեսակետներն ու հիմնադրույթները: Օրինակ՝ նեոթոմիստական բնազանցության եւ գոյաբանության մեջ տեղ են գտել՝ Պլատոնի, Արիստոտելի, Օգոստինոսի, Անսելմ Քենթրբերացու, Ս. Հովհան Դամասկացու եւ այլոց տեսակետները: Նեոթոմիզմը կուռ համակարգ է, որն ընդգրկում է նաեւ բնազանցության հետ առնչվող իմացաբանության բոլոր բաժինները: Կաթոլիկյան փիլիսոփայությունը գիտական եւ հասարակական զարգացմանը համընթաց է քայլում, դրանում է կայանում վերջինիս արդիականությունը: Այն ներկայանում է որպես «բաց համակարգ», որը մշտապես գտնվում է առաջընթացի մեջ եւ պատրաստ է ընդունել գիտական նորագույն հայտնագործություններն ու փաստարկները:

36 Տես**А. Ф. Лосев**, նշվ. աշխ., էջ 260:
37 Տես **П. Тиллих**, Систематическое Богословие, Санкт-Петербург, 1998, էջ 107: